

բնակութիւն են հաստատում Փրանսիական մայրաքաղաքի մէջ, — Փարէզը դառնումէ իսկապէս համաշխարհական քաղաք, Աշխարհաքաղաքացիութիւն (Կօմոնոլիտիզմ) — ահա, ինչպէս մվումէ, ամենից աւելի իրական և երկելի յատկութիւնը ժամանակակից Փարիզի, չընայելով բոլոր նորա ազգային առանձնութիւնների վերայ, Ժամանակակից Եւ բոլոր համար Փարէզը իսկ և իսկ այնպիսի գեր է խաղում, ինչպիս դեր խաղումեր Հռովմը Հռովմայեցւոց կայսրութեան համար և Աթենքը այն ժամանակուայ քաղաքակրթուած աշխարհի համար, Այս կենտրոնը մնաւորական և հոգեկան շահուց բոլոր Եւրոպայի,

(Ե-Ր-Ն-Ջ-Է-Լ)

(Պ-Ր-Ք-Շ.) Զ. Տէր Զաքարեանց

Ա. Թ. Ա. Ն Ա. Ս. \*

Խարտեաշ չքնաղ Աթենաս,  
Է՞ր զիս խնամել ո՞չ անսաս.  
Երբ տեսանես զիմ ջերմ իղձ,  
Պարապել քո իմաստից:  
Օր չնեսցի քո այբուբեն,  
Որ միշտ սփոփէ զիմ հոգին.  
Ա' ի թէ չիցէ քո հանձար  
Ազնիւ կենացս միայն ճար՝  
Անշուշտ եղէց ես անբան,  
Եզն լծեալ ի գութան.  
Եւ արօրեսցէ ծաղիեալ տիս,  
Յիմար փարթամն աշխարհիս:  
Առ ի՞նչ պիտին դանձը և փառք,  
Ոսկի, արծաթ ժանկահարք.  
Եյն ինչ ուսմունք և արշեստք,  
Զմարդն առնեն միայն մարդ.

(\*) Ինչպէս հազորդումէ Տփլաւու Ա. Կարապետ Եկեղեցւոյ միաբան Արժ. Յու համնես քահ. Տէր Յոկովեան այս երկու դրեւ է Տփլախուցիւ հանդուցեալ հեկոզաց Տէր Շմաւոնեան ի հանդէս Մ. Թաղեաթեանցի և Խոժոռապէմ Աթոնաս և Վերն դրու բանաստեղծութեան. երկու բանաստեղծութեաններն էլ հրատարակուած 1847 թ. Ապրիլի 12/ն Կովկազ Հայ լրագրի 15 համարում: